Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

Հ.Ս.Խ.Հ. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՓՈԽԱԴԱՐՁ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՓՈԽՈՂՆՈՒԹՅԱՆ
ԳԱՆՁԱՐԿՂ «ՀԱՅԱՐԴՅՈՒՆԿՈՈՊՍՈՑԱՊ»

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՅԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ

ԿԱՆՈՆՆԵՐ



368
Ժ-21

ՆՈՐ-ՐԱՅԱԶԵՏ
[illegible] Ն-Բայազետի տեղ. ֆնտես. բաժնի
1931

368
Ի-21

Հ.Ս.Խ.Հ. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՓՈԽԱԴԱՐՁ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՓՈԽՈԳՆՈՒԹՅԱՆ
ԳԱՆՁԱՐԿՂ «ՀԱՅԱՐԴՅՈՒՆԿՈՈՊՍՈՑԱՊ»

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՅԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ

ԿԱՆՈՆՆԵՐ

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏ
Տպարան Ն-Բայազետի տեղ. տնտես. բաժնի
1931

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԸ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՅԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. ԺԱՄԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ։

1. Փոխադարձ ապահովագրության և փոխոգնության գանձարկղը ժամանակավոր անաշխատունակության առաջանալու դեպքում իր մասնակիցներին վճարում է ժամանակավոր անաշխատունակության նպաստներ։

Ժամանակավոր անաշխատունակության ապահովելու պայմաններն ու նորմաները վորոշվում են համաձայն՝

ա) Այն պատճառները, վորոնք առաջ են բերել անաշխատունակությունը,

բ) Տվյալ մասնակցի ապահովագրման աստիճանի,

գ) Աշխատանքի ստաժի։

2. Ըստ պատճառների ժամանակավոր անաշխատունակությունը բաժանվում է հետևյալ տեսակների՝ անաշխատունակություն, վորն առաջացել է ա) հիվանդությունից (առաջացած՝ ընդհանուր պատճառներից, պրոֆեսիոնալ (արհեստի) հիվանդությունից, մարմնի աշխատանքային ցնցվածքից), բ) հղիությունից, ծննդաբերությունից, գ) կարանտինի հետևանքով և դ) ընտանիքի հիվանդ անդամին խնամելու հետևանքով։

3. Պրոֆեսիոնալ հիվանդություններ համարվում են այնպիսիք, վորոնք հիշատակված են սույն կանոնների կցված ցուցակում (կցումն № 1 ֆ.)։

4. Դժբախտ պատահարը համարվում է առաջացած անայնագործական արհեստում, արտկոլտնտեսություններում, կոլտնտեսությունում աշխատելու հետևանքով (սույն կանոնների 57 և 58 հոդվածները) և իբրև աշխատանքային հաշվություն (УВЕЧЬЕ) այն դեպքում, յերբ այդ տեղի յե ունեցել՝ ա) աշխատողների սովորական աշխատանքը կատարելիս և նմանապես ձեռնարկության ադմինիստրացիայի հանձնարարությունները կատարելիս (նույն թվում և գործուղման ժամանակ)։

բ) Յերբ գործուղողությունը կատարվել է առանց ադմինիստրացիայի հանձնարարության, բայց հիմնարկության շահերից ելնելով)։

գ) Հասարակական պարտականություններ կատարելու հետևանքով, յերբ այդ պարտականությունները կապված են այն ձեռնարկության հետ, ուր աշխատում է տվյալ մասնակիցը։

դ) Խորհրդային կուսակցական, կոոպերատիվ և արհեստակցական կազմակերպությունների հանձնարարությունները կատարելու հետևանքով, անգամ յեթե այդ հանձնարարությունները կապված չլինեն այն ձեռնարկության հետ, ուր աշխատում է մասնակիցը։

յե) Ձեռնարկության տերիտորիայի վրա կամ աշխատանքի այլ վայրում բանվորական որվա ընթացքում, հաշված և ընդհատումներն այնքան ժամանակ, վորքան անհրաժեշտ է արտադրության գործիքները, հագուստը և այլն կարգի բերելու համար, աշխատանքի սկզբում կամ աշխատանքը վերջացնելուց հետո։

զ) Ձեռնարկությունից և աշխատանքի այլ վայրից մոտիկ բանվորական որվա ընթացքում, յեթե այնտեղ գտնվելը չի հակասում ներքին կարգապահության կանոններին,

ը) Աշխատանքի գնալու կամ աշխատանքից տուն վերադառնալու ժամանակ,

թ) Կուլակների կողմից ստացած մարմնական վնասվածքի հետևանքով։

ժ) Յերբ աշխատողը պարապում է Պաջը-Ավիաքիմի գծով տարվող բնակչության զինվորականացման աշխատ

տանքներով և յերբ աշխատողը անցնելիս է յեղել զինվորական հավաքը, յեթե պահպանված է նրա պաշտոնը։

ի) Հասարակական կարգը խանգարելու դեպքում միլիցիայի մարմիններին աջակցություն ցույց տալու ժամանակ և տարերային աղետները լիկվիդացիայի յենթարկելու գործում ոգնություն ցույց տալու ժամանակ։

5. Արդկոոպերացիայի վոչ կոլեկտիվացված աշխատանքում (տներում աշխատողներ և այլն) առաջացած դժբախտ պատահարը համարվում է կատարված տնայնագործական արհեստում աշխատելու հետեվանքով միայն այն դեպքում, յերբ այդ տեղի յե ունեցել 4-րդ հոդվածի «Գ», «Դ» և «Թ» կետերում նախատեսված պայմաններում և արհեստագործությունից հուժմուլթը տուն ու տնից պատրաստի արտադրանքը փոխադրելու ժամանակ,

6. Ըստ ապահովագրության աստիճանի փոխադարձ ապահովագրության գանձարկղի մասնակիցները բաժանվում են հետեվյալ հինգ կարգերի.

1-ին ԿԱՐԳ—այն անձինք, վորոնք աշխատում են մշտական գործող (վոչ սեզոնային) կոլեկտիվացած արտադրություններում։

Ծանոթություն. Կոլեկտիվ արտադրություններին վերաբերվում են բոլոր տյն աշխատանքները, անկախ նրանից թե վորտեղ են նրանք կատարվում (ընդհանուր արհեստանոցում, քարհանքերում, շախտաերում, արդկոլտնտեսություններում, տորֆամշակումներում, անտառամշակումներում, կառուցումներում, տրանսպորտում և այլն), յեթե միայն աշխատանքը կատարվում է խմբովին, նորմայի յենթարկված աշխատավարձով, համայնացված կամ մասնակի համայնացված, նմանապես սեփական արտադրական գործիքներով։

2-րդ ԿԱՐԳ—այն անձինք, վորոնք աշխատում են սեզոնային կոլեկտիվացած արտադրություններում,

Ծանոթություն.— Սեզոնային աշխատանքներին վերաբերվում է այն աշխատանքները, վորոնք մացված են

արդկոոպերացիայի համամիութենական խորհրդի կողմից համարդկոոպգանձարկղների բյուրոյի հետ միասին հրատարակված հատուկ ցուցակի մեջ (կցումն № 2) պայմանով, յեթե այդ աշխատանքները տարվա ընթացքում շարունակվում են 8-ը ամսից վոչ ավել։ Յեթե վորեվե վայրում, ցուցակում նշված այս կամ այն աշխատանքը տարվա ընթացքում շարունակվում է 8-ը ամսից ավել, ապ դեպքում հիշյալ աշխատանքում զբաղված անձինք վերաբերվում են 1-ին կարգին։

3-րդ ԿԱՐԳ—այն անձինք, վորոնք աշխատում են վոչ կոլեկտիվացված արտադրություններում (սեզոնային կամ վոչ սեզոնային) և վորոնց համար արհեստագործությունում ստացած վաստակը կազմում է տպրուստի գլխավոր աղբյուրը։

Ծանոթություն.— Արհեստագործությունից ստացված վաստակը համարվում է ապրուստի գլխավոր աղբյուրն այն դեպքում, յերբ դեպքի ապահովագրության ամսի 1-ից հաշված, նախորդ յերեք ամիսների ընթացքում, նա կազմել է վոչ պակաս քան տասը անգամ ավելի այն պետ. մինիմումից, վորը սահմանված է ավյալ գոտիի համար ՀՍԽՄ աշխժողկոմատի կողմից։

4-րդ ԿԱՐԳ—այն անձինք, վորոնք աշխատում են վոչ կոլեկտիվացած արտադրություններում և վորոնց համար արհեստագործությունից ստացված վաստակը կազմում է ապրուստի լրացուցիչ աղբյուր։

5-րդ ԿԱՐԳ—վոչ կոոպերացված տնայնագործները։

7 Ժամանակավոր անաշխատունակության նպաստ տրվում է միայն այն դեպքում, յերբ անաշխատունակության հետեվանքով գանձարկղի մասնակիցը կորցրել է տնայնագործական արհեստից կամ գյուղատնտեսությունից ստանալիք վաստակը (սուրն կանոնների 61 և 72 հոդվածներ), յեթե անգամ անաշխատունակությունը վոչ մի կապ չունենա փոխադարձ ոգնության գանձարկղի մասնակցի

աշխատանքի հետ տնայնագործական արհեստում կամ գյուղատնտեսության մեջ։

8. Ուսանողները յեթե գանձարկղի մասնակիցներ են յեղել անմիջականորեն մինչև ուսումնական հիմնարկություն մտնելը, ժամանակավոր անաշխատունակության պատճառով ապահովագրվում են միայն այն ժամանակ, յերբ դեպքը տեղի յե ունեցել արդկոոպերացիայի սիստեմում արտադրական պրակտիկայի անցնելու ընթացքում։

9. Արտելների կամ արդկոոպ. միությունների կողմից կազմակերված վորակը բարձրացնելու, վերավորակավորելու կամ թե կադրեր պատրաստելու կուրսերում սովորողները, ժամանակավոր անաշխատունակության պատճառով ապահովագրվում են այն դեպքում, յեթե նրանք գործուղման ժամանակ յեղել են գանձարկղի մասնակիցներ։

10. Գանձարկղի այն մասնակիցները, վորոնք զբաղված են կոլեկտիվացած արտադրություններում ոգտվում են անաշխատունակության բոլոր տեսակի նպաստ ստանալու իրավունքով։

11. Գանձարկղի այն մասնակիցները, վորոնք զբաղված են վոչ կոլեկտիվացած արտադրություններում ոգտվում են անաշխատունակության բոլոր տեսակի նպաստ ստանալու իրավունքով, բացի այն դեպքից, յերբ անաշխատունակությունն առաջ ե յեկել կարանտինում գտնվելու կամ ընտանիքի հիվանդ անդամին խնամելու հետևանքով։

Ծանոթություն. Սույն հոդվածում նշված գանձարկղի մասնակիցներին կարանտինի հետևանքով առաջացած ժամանակավոր անաշխատունակության նպաստ տրվում ե միայն այն դեպքում, յերբ նրանք պարապում են այնպիսի արհեստներով, վորոնց արտադրանքը կարող ե ծառայել վարակիչ հիվանդությունների տարածման աղբյուրը (որինակ սննդամթերքների արտադրություն, յերեխաների խաղալիքների և այլն), վորի հետևանքով նրանք կարանտինի ժամանակամիջոցում զրկված են յեղել հնարավորությունից պարապել իրենց արհեստագործությամբ (չեն մատակարարվել հումքով արտելների կողմից և այլն)։

12. Ուսանողները, յեթե գանձարկղի մասնակիցներ են յեղել անմիջականորեն մինչև ուսումնական հիմնարկություն մտնելը, արտադրական պրակտիկա անցնելիս ժամանակավոր անաշխատունակության պատճառով ապահովագրվում են միայն այն դեպքերի նկատմամբ, վորոնք առաջ են յեկել հիվանդության, հղիության և ծննդաբերության հետևանքով։ Արտելների կամ արդկոոպմիության կողմից կազմակերպված վորակը բարձրացնելու, վերավորակավորելու կամ թե կադրեր պատրաստելու կուրսերում սովորողներն ապահովվում են ժամանակավոր անաշխատունակության բոլոր տեսակի նպաստներով կամ նրանց մի մասով (բացի կարանտինի և ընտանիքի հիվանդ անդամ խնամելու նպաստներից) նայած, նրան թե՝ նրանք մինչև ուսուցման գործուղելը յեղել են կոլեկտիվացված թե վոչ կոլեկտիվացված արտադրություններում։

13. Բոլոր տեսակի ժամանակավոր անաշխատունակության նպաստները, բացի այն անաշխատունակությունից, վորն առաջ ե յեկել հղիությունից և ծննդաբերությունից, տրվում են անկախ գանձարկղին մասնակցելու ստաժի տեվողությունից։

14. Հղիության և ծննդաբերության հետևանքով առաջացած ժամանակավոր անաշխատունակության նպաստը տրվում ե միայն գանձարկղում անընդհատ մասնակցելու հետևյալ պայմաններով՝

ա) 2-րդ կարգի ապահովագրվածների նկատմամբ մինչև բժշկի վորոշմամբ հղիության հետևանքով աշխատանքից ազատվելը պահանջվում ե 4 ամսվա ստաժ։

բ) 3-րդ և 4-րդ կարգի ապահովագրվածների նկատմամբ բժշկի վորոշմամբ աշխատանքից ազատվելը պահանջվում ե 6 ամսվա ստաժ։

5-րդ կարգի ապահովագրվածների նկատմամբ մինչև

բժշկի վորոշմամբ աշխատանքից ազատվելը պահանջվում է 8 ամսվա ստաժ։

Մանրություն. 1-ին կարգի ապահովագրվածները ստանում են նպաստ անկախ գանձարկղում մասնակցելու ստաժի տեվողությունից։

15. Այն անձանց համար, վորոնք մինչև գանձարկղի մասնակիցների կազմի մեջ ընդունվելը աշխատել են վարձով, (յեթե աշխատանքը թողնելու որից մինչև գանձարկղի մասնակիցների կազմի մեջ ընդունվել անցել է մեկ ամսից վոչ ավել), վարձու աշխատանքի ստաժը և վարձու աշխատանքի ժամանակ տեղի ունեցած ժամանակավոր անաշխատունակության որերը մտցվում են 14-րդ հոդվածով պահանջվող ստաժի մեջ, յեթե միայն նրանց փոխադրումը չի առաջացել ինքնակամ կերպով աշխատանքից հեռանալու կամ ներքին կարգապահական կանոնները խախտելու հետեվանքով.

16. Այն դեպքում, յեթե ապահովագրվածը մեկ գանձարկղից փոխադրվում է մի այլ գարձարկղ, նրա մինչև այդ ունեցած գանձարկղում մասնակցելու ստաժը մտցվում է 14-րդ հոդվածով պահանջվող գանձարկղում մասնակցելու ստաժի մեջ, յեթե ընդհատումը փոխադրությունների ժամանակ չի յեղել մեկ ամսից ավելի։

Պահանջվելիք ստաժի մեջ մտցվում է նույնպես ժամանակավոր անաշխատության հետեվանքով նպաստի ստացման ժամանակը։

17. Կալանքի տակ կամ դատական-բժշկական եկսպերտիզայում գտնվելու ամբողջ ժամանակաընթացքում ժամանակավոր անաշխատունակության նպաստ չի տրվում։

Յեթե անաշխատանակությունը շարունակվում է և ազատվելուց հետո, այդ դեպքում ազատվելուց հետո անաշխատունակության որերի նպաստը տրվում է յեթե գանձարդկի մասնակիցը անցել է նորից աշխատանքի։

2. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ, ՄԱՍՆԱԿԻ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇ ԴԵՊՔԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄԸ ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

18. Յեթե գանձարկղի մասնակիցը հիվանդության պատճառով չի կարողանում կատարել իր սովորական աշխատանքը, բայց ընդունակ է առանց վնասի իր առողջության համար և չխախտելով, բժշկության նորմալ ընթացքը, կատարել այլ աշխատանքներ, այդ դեպքում նա փոխադրվում է այլ աշխատանքների։

19. Այլ աշխատանքի փոխադրելու անհրաժեշտությունը, աշխատանքի բնույթը և այդ աշխատանքում մնալու տեվողությունը վորոշում է քուժող բժիշկը, իսկ մեկ ամսից ավելի ժամանակով փոխադրելու դեպքում բժշկական-վերահսկիչ հանձնաժողովը։ Փոխադրությունը իրագործում է ձեռնարկության ադմինիստրացիան, համաձայնության գալով աշխատանքի պաշտպանության և կենցաղի հանձնաժողովի հետ։

20. Այլ աշխատանքի փոխադրելու դեպքում նպաստը հաշվվում է ընդհանուր հիմունքներով, բայց վճարում է դուրս գալով այն վաստակը, վորը ստացել է գանձարկղի մասնակիցը ժամանակավոր աշխատանքում։

21. Այն դեպքում, յերբ գանձարկղի մասնակիցը առանց հարգելի պատճառների խուսափում է նրան առաջարկած աշխատանքից, գանձարկղը վճարում է միայն անաշխատունակության նպաստի և առաջարկած աշխատանքի աշխատավարձի տարբերությունը, յեթե աշխատավարձի չափը ցածր է քան նպաստը։

22. Յեթե տվյալ ձեռնարկության մեջ բոլորովին չի կարող տրվել աշխատանք կամ չի կարող տրվել անաշխատունակության թերթիկում նշած ժամանակամիջոցում, այդ դեպքում բաց թողած բոլոր որերի նպաստը վճարվում է ընդհանուր հիմունքներով։

3. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԵԼՈՒ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

23. Ժամանակավոր անաշխատունակության նպաստը հիվանդության հետեվանքով տրվում է անաշխատունակությունը կորցնելու առաջին որից մինչև նրա վերականգնումը կամ թե մինչև աշխատունակության վերջնականապես կորցնելը (հաշմանդամություն), վորպիսի հանդամանքը սահմանում է բժշկական-եկսպերտ հանձնաժողովը, իսկ այնտեղ, վորտեղ այդպիսինը չկա բժշկական-վերահսկիչ հանձնաժողովը։

Ծանոթություն. Սույն հոդվածը չի տարածվում գանձարկղի այն մասնակիցների վրա, վորոնք զբաղված են սեզոնային բնույթ ունեցող աշխատանքներում, կառուցողների վրա, յեթե սրանք վերջին 13 ամիսների ընթացքում չեն աշխատել 12 ամիս և վոչ կոոպերացված տնայնագործների վրա, վորոնք ապահովագրվում են մինչև առողջանալը կամ հաշմանդամության անցնելը, բայց վոչ ավելի քան մինչև սեզոնի վերջանալն առաջին դեպքում և վոչ ավելի քան յերեք ամիս, յերկրորդ դեպքում։

24. Ժամանակավոր անաշխատունակության նպաստը հղիության կամ ծննդաբերության հետեվանքով տրվում է՝

ա) գանձարկղի այն մասնակիցներին, վորոնք ապահովագրված են 1-ին կարգով (սույն կանոնների 6-րդ հոդված)—56 որացույցային որվա ընթացքում մինչև ծննդաբերությունը և 56 որացույցային որվա ծննդաբերությունից հետո, յեթե նրանք զբաղված են ֆիզիքական աշխատաքով, և 42 որացույցային որվա ընթացքում մինչև ծննդաբերությունը և 42 որացույցային որվա ծննդաբերությունից հետո, յեթե նրանք զբաղված են մտավոր կամ գրասենյակային աշխատանքով։

բ) գանձարղի այն մասնակիցներին, վորոնք ապահովագրված են 2-րդ կարգով (6-րդ հոդված) 42 որացույցային

որվա ընթացքում մինչև ծննդաբերությունը և 42 որացույցային որվա ծննդաբերությունից հետո։

գ) գանձարկղի այն մասնակիցներին, վորոնք ապահովագրված են 3-րդ կարգով (6 հոդված) 35 որացույցային որվա ընթացքում մինչև ծննդաբերությունը և 35 որացույցային որվա ծննդաբերությունից հետո։

դ) գանձարկղի այն մասնակիցներին, վորոնք ապահովագրված են 4—5 կարգով (6-րդ հոդված)—28 որացույցային որվա ընթացքում մինչև ծննդաբերությունը և 28 որացույցային որ ծննդաբերությունից հետո։

Ծանոթություն. Գանձարկղի այն մասնակիցներին, վորոնք ապահովագրված են 1-ին կարգով (6-րդ հոդ.) նպաստը տրվում է 56 որացույցային որվա ընթացքում մինչև ծննդաբերությունը և 56 որացույցային որվա ծննդաբերությունից հետո նաև այն դեպքում, յեթե նրանք վերաբերվում են մտավոր կամ գրասենյակային աշխատանքի այն պրոֆեսսիաներին, վորոնք աշխատանքի ժողովրդական կոմիսարիատի կողմից (կցում № 3) համաձայն սույնին կցված ցուցակի հղիության և ծննդաբերության արձակուրդի տեվողության տեսակետից հավասարեցված են ֆիզիկական աշխատանքով զբաղված անձանց։

25. Այն դեպքում, յերբ վորեվե պատճառով գանձարկղի մասնակիցը մինչ ծննդաբերությունն արձակուրդում մնա պակաս կամ ավել այն ժամկետից, վորի համար գանձարկղի կանոնների հիման վրա տրվում է հղիության նպաստ, այդ դեպքում նպաստը տրվում է այն ժամանակի համար, վորքան բժշկի վորոշմամբ նա փաստորեն յեղել է արձակուրդի մեջ։

26. Այն դեպքում, յերբ գանձարկղի մասնակիցն ունեցել է վիժում մինչև հղիության 28 շաբաթը, անաշխատունակության նպաստը տրվում է այն ժամանակաընթացքի համար, վորքան նա սահմանված կարգով ճանաչված է անաշխատունակ հիվանդության հետևանքով։

27. Այն դեպքում, յերբ գանձարկղի մասնակիցը չի

ներկայանում աշխատանքի կարանտինի հետևանքով՝ նրա շրջապատողների մեջ վարակիչ հիվանդություն լինելու ճառով, որը թույլ չի տալիս գանձարկղի մասնակցին պատդուրս գալ աշխատանքի, կարանտինում մնալու ժամանակի նպաստը տրվում է միայն այն դեպքում, եթե նա սանիտարական հսկողության կարգադրությամբ, իսկ բժշկական հսկողության մարմիններ չլինելու դեպքում, բուժող բժշկի կամ բուժակային կայանի վարիչի կարգադրությամբ, փաստորեն մեկուսացված է յեղել շրջապատողներից։

28. Այն դեպում, յերբ կոլեկտիվացված արտադրության մեջ աշխատող գանձարկղի մասնակիցը չի ներկայանում աշխատանքի՝ ընտանիքի հիվանդ անդամին խնամելու հետևանքով, ժամանակավոր անաշխատունակության նպաստը տրվում է աշխատանքի չներկայանալու ամբողջ ժամանակի համար։

Նպաստը տրվում է միայն այն դեպքում յեթե կան հետևյալ պայմանները միաժամանակ՝

ա) Յեթե խնամքի բացակայությունը վտանգ է սպառնում հիվանդի կյանքին կամ առողջությանը։

բ) յեթե հնարավորություն չկա հիվանդին տեղափոխելու բուժական հիմնարկություն և

գ) յեթե հիվանդի ընտանիքում չկա ուրիշ անդամներ, վորոնք կարող են խնամել հիվանդին։

Նանոթություն. Ընտանիքի այն անդամներին, վորոնց խնամելը իրավունք է տալիս գանձարկղի մասնակցին ստանալու ժամանակավոր անաշխատունակության նպաստ, վերաբերվում են՝ ամուսինը, յերեխաները, յեղբայրը և քույրը, նմանապես և մասնակցի ծնողները, յեթե ապրում են նրա հետ միասին։

29. Գանձարկղները իրավասու յեն վճարելու հիվանդին խնամելու համար հրավիրված անձանց ծախքերը, յեթե առ յերես են 28-րդ հոդվածում նախատեսված բոլոր

պայմանները և, յեթե այդ ծախքերը չեն գերազանցում այն նպաստից, վորը պետք է տրվեր հիվանդին խնամելու համար աշխատանքից ազատման յենթակա մասնակցին։

30. Կրծքի յերեխայի (ծծկեր) հիվանդանալու դեպքում կոլեկտիվացված արտադրության մեջ զբաղված մայրը ազատվում է աշխատանքից անկախ նրանից թե ընտանիքում կա՞ թե վոչ մի ուրիշ անդամ, վորը կարող է խնամել հիվանդ յերեխային, և մորը տրվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստ։

Ընտանիքի մյուս հիվանդ անդամների խնամքը պետք է դրվի ընտանիքի այն անդամի վրա, վորը կարող է խնամել, բայց յերբեք չի աշխատում կամ աշխատում է տանը։

Յեթե ընտանիքի բոլոր անդամները աշխատում են կոլեկտիվացված արտադրության մեջ, անաշխատունակության նպաստը տրվում է նրան, վորը փաստորեն խնամում է հիվանդին։

31. Հիվանդ յերեխային հիվանդանոցում տեղավորելու դեպքում ժամանակավոր անաշխատունակության նպաստ տրվում է մորը միայն այն դեպքում, յերբ բժիշկը անհրաժեշտ կդտնի, վորպեսզի մայրը մնա հիվանդանոցում հիվանդ յերեխայի մոտ։

32. Յեթե ժամանակավոր անաշխատունակությունը առաջանում է այն շրջանում, յերբ արտելը ժամանակավորապես դադարեցրել է աշխատանքը (հումույթ չլինելու պատճառով և այլն), ժամանակավոր անաշխատունակության նպաստ չի տրվում, անկախ նրանից թե դադարի ժամանակ պահպանված է արդկոոպերատիվ կազմակերպության անդամի համար վորևվե վաստակ թե վոչ։

Յեթե մինչև աշխատանքի ժամանակավոր դադարեցումը առաջացած անաշխատունակությունը շարունակվում է դադարի ժամանակ ևս, այդ դեպքում դադարի ժամանակամիջոցի նպաստը տրվում է այն վաստակի չափով, վորը պահպանվում է դադարի ժամանակ ար-

տելի նույն պրոֆեսիայի և վորակի այլ անդամների համար։

Եթե անաշխատունակությունն առաջացել է մինչև աշխատանքի դադարեցումը կամ դադարի ժամանակ ու շարունակվում է և աշխատանքները վերսկսելուց հետո, նպաստը վճարվում է այն չափով, ինչ չափով վճարվում եր մինչև աշխատանքի դադարեցումը։

33. Եթե կոլեկտիվացված արտադրության մեջ աշխատող գանձարկղի մասնակցի ժամանակավոր անաշխատունակությունն առաջ է եկել առանց աշխատավարձի պահպանման արձակուրդի ժամանակ, ժամանակավոր անաշխատունակության նպաստ չի տրվում։ Եթե արձակուրդի ժամկետը նախորոք ստույգ կերպով սահմանված է արտելի վարչության կողմից և անաշխատունակությունը շարունակվում է և արձակուրդի վերջանալուց հետ նպաստը տրվում է այդ արձակուրդի ժամկետի վերջանալու որից։

Եթե կոլեկտիվացված արտադրության մեջ աշխատող գանձարկղի մասնակցի ժամանակավոր անաշխատունակությունն առաջ է եկել հիվանդության հետևանքով աշխատավարձը պահպանված արձակուրդի ժամանակ, ժամանակավոր անաշխատունակության նպաստը տրվում է պայմանով՝

ա) Եթե անաշխատունակությունը կապված է յեղել հիվանդին պառկեցնելու և բուժում տալու անհրաժեշտության հետ։

բ) Եթե արտելը համաձայնել է համապատասխան չափով յերկարացնել արձակուրդը, առանց պահպանելու նրա աշխատավարձը։

Ժամանակավոր անաշխատունակության նպաստը հրդիության հետևանքով, վորը զուգադիպում է հերթական արձակուրդին, յենթակա յե վճարման անկախ գանձարկղի

մասնակցի անկողնում մնալու անհրաժեշտությունից, յեթե կատարում է սույն հոդվածի «բ» կետը։

34. Ժամանակավոր անաշխատունակության բոլոր տեսակի նպաստ տրվում է սեզոնային ընդհատումներ ունեցող աշխատանքներում զբաղված գանձարկղի մասնակիցներին (անտառահատներ և այլն), բայց վոչ ավել քան մինչև սեզոնի վերջանալը։

35. Կառուցողներին, վորոնք մինչև ժամանակավոր անաշխատունակության առաջանալը 12 ամսվա ընթացքում չունեն 13 ամսվա աշխատանք մեկ կամ մի քանի ձեռնարկություններում, տվյալ ապահովագրական դեպքի համար տրվում է նպաստ 3 ամսից վոչ ավել անաշխատունակության առաջանալու որից։

36. Ուսանողներին, վորոնք գտնված են արտադրական պրակտիկայում, ժամանակավոր անաշխատունակության նպաստը տրվում է մինչև առողջանալը, բայց վոչ ավել քան մինչև պրակտիկայի ժամկետի վերջանալը։

37. Գանձարկղի այն մասնակիցներին, վորոնք փոխադրված են հաշմանդամության պատճառով թոշակառուների շարքը և շարունակում են դրանից հետո աշխատել արտելում, ժամանակավոր անաշխատունակության նպաստ հիվանդության հետևանքով տրվում է՝

ա) Եթե հիվանդությունը տեվում է յերկու ամսից վոչ ավել անընդհատ, կամ նրա կրկնողության դեպքում յերեք ամսից վոչ ավել որացուցային տարվա ընթացքում 39-րդ հոդվածով սահմանված չափով։

բ) Եթե հիվանդությունը տեվում է յերկու ամսից ավել անընդհատ, կամ թե նրա կրկնողության դեպքում յերեք ամսից ավել, հիվանդությունը այդ ժամանակաընթացքից ավել տեվելու դեպքում վճարվում է միայն նշանակված կենսաթոշակը,

(5590-53) ZUUB ԱՍՍՀ.ՍՍՀ 22243-59

38. Սույն կանոնների 34, 35, 36, և 37 հոդվածներում նշված գանձարկղի մասնակիցները, որոնց ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է աշխատանքի ժամանակ ստացած մարմնական վնասվածքների (УВЕЧЬЕ) կամ պրոֆհիվանդությունների հետևանքով, նպաստով ապահովվում են մինչև առողջանալը կամ աշխատունակության վերջնականապես կորցնելը (հաշմանդամություն)։

4. ՆՊԱՍՏՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՇՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

39. § 1. Ժամանակավոր անաշխատունակության նպաստը պետք է վճարվի անաշխատունակության առաջին օրից լրիվ վաստակի չափով։

ա) Գանձարկղի 1-ին և 2-րդ կարգին վերաբերվող այն մասնակիցներին, որոնք անմիջապես զբաղված են արտադրության մեջ (բացի գրասենյակի աշխատակիցներից), աշխատել են տվյալ արտելում (տվյալ ձեռնարկությունում) 2 տարուց ավել և ունեն արտադրական ընդհանուր աշխատանքի ստաժ յերք տարուց ավել։

բ) 1-ին և 2-րդ կարգին վերաբերվող և անմիջապես արտադրության մեջ զբաղված այն հարվածայիններին, որոնք անկախ տվյալ արտելի աշխատանքից (տվյալ ձեռնարկության), ունեն արտադրական ընդհանուր աշխատանքի ստաժ մեկ տարուց վոչ պակաս։

Ծանոթություն.—Հարվածայնությունը վորոշվում է արտելի վարչության (ձեռնարկության) կողմից տվյալ արտելի (ձեռնարկության) աշխատանքի պաշտպանության և կենցաղի հանձնաժողովի հետ միասին։

գ) մինչև 18 տարեկան հասակ ունեցող 1-ին և 2-րդ կարգին վերաբերվող այն անչափահասներին, որոնք զբաղված են արտելներում անընդհատ մեկ տարուց վոչ պակաս, անկախ նրանց ֆունկցիաներից։

Ծանոթություն.—Տվյալ դեպքում արտադրական ձեռնարկություններին վերաբերվում են այնպիսիները, որոնք արտադրում են հումույթը և պատրաստի արտադրանք, (ածուխ, հանքաքար, նավթ, ոդից ազոտ և այլն) և այդպիսիները, որոնք զբաղված են բոլոր տեսակի հումույթի վերամշակումով (կիսաֆաբրիկատներ, ֆաբրիկատներ) և նմանապես կառուցումները ու տրանսպորտը, անկախ այդ ձեռնակություններում գանձարկղի զբաղված մասնակիցների քանակից։

Արտադրական ձեռնարկություններին պետք է վերաբերվեն նաև այն վերանորոգման արհեստանոցները, որոնք զբաղված են տրանսպորտի և գյուղատնտեսական ինվենտարի և գործիքների վերանորոգման գործով, նմանապես և նրանք, որոնք զբաղված են հագուստեղենի և կոշիկեղենի վերանորոգումով։

§ 2. Ժամանակավոր անաշխատունակության նպաստը պետք է վճարվի առաջին 15 որացույցային որերի համար վաստակի 3/4 չափով, իսկ այնուհետև վաստակի լրիվ չափով։ 1-ին և 2-րդ կարգին վերաբերվող գանձարկղի այն մասնակիցներին, որոնք զբաղված են՝ մտավոր և գրասենյակային աշխատանքով կոլեկտիվացված արտադրության մեջ (կոնտորուկտորների գծագիրների, բժիշկների և այլ արտելներ), առևտրական և վոչ արտադրական ձեռնարկություններում (ճաշարաններ, վարսավերանոցներ, լվացքատներ և հարթուկանոցներ, լուսանկարանոցներ և այլն), վերանորոգման արհեստանոցներում (բացի այն արհեստանոցներից, որոնք զբաղված են սպորտի և գյուղատնտեսական ինվենտարի և գործիքների վերանորոգման գործով և հագուստեղենի ու կոշիկների վերանորոգումով), նմանապես և արտադրական արտելների գրասենյակներում զբաղվածներին, որոնք տվյալ արտելներում (տվյալ ձեռնարկությունում) աշխատել են յերկու տարուց ավե-

լի և ունեն ընդհանուր աշխատանքի ստաժ յերեք տարուց ավել։

§ 3. Ժամանակավոր անաշխատունակության նպաստ պետք է վճարվի առաջին 20 որացուցցային որերի համար վաստակի 3/4 չափով, իսկ այնուհետև վաստակի լրիվ չափով.

ա) 1-ին և 2-րդ կարգին վերաբերվող գանձարկղի այն մասնակիցներին, վորոնք տվյալ արտելում (տվյալ ձեռնարկությունում) անկախ նրա ֆունկցիաներից, անընդհատ աշխատել են յերկու տարուց ավել և չունեն ընդհանուր առմամբ աշխատանքի յերեք տարվա ստաժ։

բ) 1-ին և 2-րդ կարգին վերաբերվող գանձարկղի այն մասնակիցներին, վորոնք աշխատում են իբրև՝ ա) կառուցողներ, բ) լեռնագործներ (ածուխի, կրի, նավթի, տորֆի, գրանիտի, ադի, կավիճի քարերի, կավի, ավազի արտադրության և այլն), գ) ուտիլ հումքի սորտիրովկայի և նրա վերամշակման աշխատանքներով դ) եկսպորտային ապրանքների պատրաստողներ, և վորոնք տվյալ արտելում (տվյալ ձեռնարկությունում) աշխատել են անընդհատ մեկ տարուց մինչև յերկու տարի։ յե) 1-ին և 2-րդ կարգի վերաբերվող և մինչև 18 տարեկան հասակ ունեցող այն անչափահասներին, վորոնք չունեն § 1, «գ» կետում նշված աշխատանքի ստաժը։

§ 4. Ժամանակավոր անաշխատունակության նպաստ պետք է վճարվի առաջին 20 որացուցցային որերի համար վաստակի 2/3 չափով, իսկ այնուհետև վաստակի լրիվ չափով՝

ա) 1-ին և 2-րդ կարգին վերաբերվող գանձարկղի այն մասնակիցներին, վորոնք տվյալ արտելում (տվյալ գանձարկղում), անկախ նրա ֆունկցիաներից, աշխատել են անընդհատ մեկ տարուց մինչև յերկու տարի։

բ) 1-ին և 2-րդ կարգին վերաբերվող գանձարկղի այն մասնակիցները, վորոնք աշխատում են իբրև՝ կառուցողներ, լեռնագործներ (տես 39 հոդվածի § 3), ուտիլ հումքի սորտիրովկայի և նրա վերամշակման աշխատանքներով, եկսպորտային ապրանքների պատրաստողներ և վորոնք աշխատել են մեկ տարուց պակաս։

Այս խմբակին վերաբերվում են այն կառուցողները, վորոնք վերջին 13 ամիսների ընթացքում, մինչև ժամանակավոր անաշխատունակության առաջանալու որը, աշխատել են 12 ամիս։

§ 5. Ժամանակավոր աշխատունակության նպաստը պետք է վճարվի վաստակի 2/3 չափով անաշխատունակության ամբողջ ընթացքում 1-ին և 2-րդ կարգին վերաբերվող գանձարկղի այն մասնակիցներին, վորոնք աշխատել են տվյալ արտելում (տվյալ ձեռնարկություններում), անկախ նրա ֆունկցիաներից, մեկ տարուց պակաս։

§ 6. Ժամանակավոր անաշխատունակությանն նպաստը պետք է վճարվի վաստակի 2/3 չափով անաշխատունակության ամբողջ ժամանակ գանձարկղի այն մասնակիցներին, վորոնք պատկանում են 3-րդ կարգին։

§ 7. Ժամանակավոր անաշխատունակության նպաստը պետք է վճարվի առաջին 20 որացուցցային որերի համար վաստակի կիսի չափով, իսկ այնուհետև վաստակի 2/3 չափով գանձարկղի այն մասնակիցներին, վորոնք պատկանում են 4-րդ կարգին։

§ 8. Ժամանակավոր անաշխատունակությանն նպաստը պետք է վճարվի առաջին 30 որացուցցային որերի համար վաստակի կիսով չափ, իսկ այնուհետև վաստակի 2/3 չափով, բայց տվյալ ապահովագրական դեպքի համար վոչ ավել քան յերեք ամիս, գանձարկղի այն մասնակիցներին, վորոնք պատկանում են 5-րդ կարգին,

40. Նպաստի այս կամ այն չափը վորոշելու համար աշխատանքի ընդհանուր ստաժը հաշվել, մինչև գանձարկղ ապահովագրվելը արտելում աշխատելու ժամանակը և վարձու աշխատանքի ժամանակը (անհրաժեշտ ճյուղերում) մտցվում է ստաժի մեջ։

Արտելում արտադրական պրակտիկայում գտնվող անմիջականորեն մինչև ուսումնական հիմնարկությունն մտնելը գանձարկղի մասնակից յեղած ուսանողների նպաստի այս կամ այն չափը վորոշելու համար աշխատանքի ստաժը ընդհանուր առմամբ և տվյալ հիմնարկությունում հաշվելիս, ուսուցման ժամանակը չի ընդգրկում ստաժի ընթացքը, բայց չի մտցվում ստաժի մեջ։

Ստաժի մեջ մտցվում է արտելների կամ արդկոոպ միությունների կողմից վորակի բարձրացման, վերավորակավորման և կադրերի պատրաստման համար կազմակերպված կուրսերում սովորելու ժամանակամիջոցը, յեթե ուսանողները գործուղված են յեղել այդ կուրսերը վերջինների կողմից և գանձարկղի մասնակիցներին։

Անպայմանորեն պետք է մտցվի ստաժի մեջ և ժամանակավոր անաշխատունակության ժամանակաընթացքը, ինչպես արտելում աշխատելու, նույնպես և վարձու աշխատանքի շրջանում, յեթե վարձու աշխատանքը նկատի յե առնված ստաժը հաշվելու ժամանակ։

41. Յեթե գանձարկղի մասնակիցը տեղափոխվում է մեկ ձեռնարկությունից մյուսը ադմինիստրացիայի կարգադրությամբ կամ աշխատանքից հեռացնելու դեպքում վոչ աշխատողի մեղքով, այդ դեպքում տեղափոխությունը չի ընդհատում անընդհատ աշխատանքի ստաժը, վորը իրավունք է տալիս ստանալու ժամանակավոր անաշխատունակության նպաստի բարձր չափը։

42. 39-րդ հոդվածում նշած նպաստի չափերը գոր-

ծադրվում են ժամանակավոր անաշխատունակության բոլոր տեսակների նկատմամբ (մարմնի վնասվածք, պրոֆհիվանդություն, ընդհանուր պատճառներ, հղիության կարանտին և խնամք)։

ooooo

ԱՂՅՈՒՍԱԿ

Համամիութենական արդյունաբերական կոոպերացիայի փոխադարձ օգնության 39-րդ կետից բղխող անաշ

ԻՍԱԿ

ապահովագրության գանձարկղների բյուրոյի 6-րդ պլենումի վորոշման ունակության նպաստների չափերը

ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐ	Մինչև ժամանակավոր անաշխատունակություն առաջանալը տվյալ ձեռնարկության մեջ 2 տարուց ավել և ընդհանուր առմամբ 3 տարուց ավել աշխատանքի ստաժ ունեցողները	Մինչև ժամանակավոր անաշխատունակություն առաջանալը տվյալ ձեռնարկության մեջ 2 տարուց ավել աշխատողները, վորոնք ընդհանուր առմամբ 3 տարուց ավել ստաժ չունեն	Մինչև ժամանակավոր անաշխատունակություն. առաջանալ տվյալ ձեռնարկության մեջ 1-ից մինչև 2 տարի անընդհատ աշխատողներ	Մինչև ժամանակ. անաշխատունակություն առաջանալը տվյալ արտադրում 1 տարուց պակաս աշխատողները	Ընդհանուր առմամբ 1 տարուց վոչ պակաս արտադրական ստաժ ունեցող հարվածայինները
Ա. 1-ին և 2-րդ կարգի վերաբերվող գանձարկղի մասնակիցները, վորոնք զբաղված են արտադրական ձեռնարկ. և տրանսպորտը, գյուղատնտեսական ինվենտ. ու գործիքներ, նմանապես և հագուստեղեն ու կոշիկներ վերանորոգելու արհեստանոցներում.	100 տոկոս սկսած առաջին որից	3/4 առաջին 20 որացուցյցային որերի համար	2/3 առաջին 20 որացուցյցային որերի համար	2/3 ժամանակավոր անաշխատունակության ամբողջ ժամանակի ընթացքում	100 տոկոս սկսած առաջին որից
Բ. Կառուցողներ, լեռնագործներ, ուսիլա հուժույթի և եկսպորտային ապրանքներ պատրաստելու աշխատանքներով զբաղվողներ.	Նույնը	3/4 առաջին 20 որացուցյցային որերի համար		2/3 առաջին 30 որացուցյցային որերի համար	Նույնը տես ծանոթություն
Գ. 1-ին և 2-րդ կարգին վերաբերվող գանձարկղի մասնակիցներ, վորոնք զբաղված են մասնավոր և գրասենյակային աշխատանքներով, առևտր. և վոչ արտադրական ձեռնարկություններում վերանորոգման արհեստանոցներում (բացի տրանսպորտի և գյուղատնտ. ինվենտար, գործիքներ, հագուստեղեն և կոշկեղեն վերանորոգող արհեստանոցներից).	3/4 առաջին 15 որացուցյցային որերի համար	3/4 առաջին 20 որացուցյցային որերի համա	2/3 առաջին 29 որացուցյցային որերի համար	2/3 ժամանակավ. անաշխատունակության ամբողջ ժամանակի համար	
Դ. 1-ին և 2-րդ կարգին վերաբերվող մինչև 18 տարեկան հասակ ունեցող անչափահասներ.	100 տոկոս սկսած առաջին որից	100 տոկոս սկսած առաջին որից	100 տոկոս առաջին որից	3/4 առաջին 20 որացուցյցային որերի համար	100 տոկոս սկսած առաջին որից, բայց վերաբերվ. Ա. և Բ. կ. նշված աշխատ.
Ցե. 3-գ կարգին վերաբերվող գանձարկղի մասնակիցներ	2/3 անաշ	խատունակության ամբողջ ժամանակի համար			
Զ. 4-րդ կարգին վերաբերվող գանձարկղի մասնակիցներ	50 տոկոս առաջին	20 որացուցյցային որերի համար և 2/3 մնացած ժամանակի համար			
Ը) 5-րդ կարգին վերաբերվող գանձարկղի մասնակիցներ	50 տոկոս առաջին 30 բայց տվյալ ապա	որացուցյցային որերի համար և 2/3 մնացած ժամանակի համար, հովագրության դեպքում վոչ ավել քան 3 ամսվա ընթացքում			
Ծանոթություն. Այն կառուցողները, վորոնք վերջին 13 ամիսներում չեն ունեցել 12 ամսվա աշխատանք մեկ կամ մի քանի ձեռնարկություններում, ստանում են 2/3 ան		աշխատունակության ամբողջ ժամանակ։			

43. Ժամանակավոր անաշխատունակության նպաստը, հաշված գանձարկղի կողմից համաձայն 39-րդ հոդվածի, տրվում է վոչ ավել քան ժամանակավոր անաշխատունակության նպաստի համար սահմանված մաքսիմալ չափը։

Մաքսիմալ չափ սահմանվում է՝

ա) 1-ին և 2-րդ կարգին պատկանող և անմիջապես արտադրության մեջ զբաղված հարվածայինների համար 300 ռուբլի։

բ) 1-ին և 2-րդ կարգին պատկանող մնացած մյուս մասնակիցների համար 250 ռուբլի։

գ) 3-րդ 4-րդ և 5-րդ կարգին պատկանող մասնակիցների համար 200 ռուբլի։

44. Նպաստի որական մաքսիմալ չափը վորոշվում է տվյալ վայրի համար ընդունված ամսական մաքսիմումն որացույցային բանվորական որերի կամ որացույցային բոլոր որերի կամ թե անաշխատունակության ամսում աշխատանքի դուրս յեկած որերի թվի վրա բաժանելու միջոցով, համաձայն հաշվարկի կատարման կարգի, նախատեսված սույն կանոնների 50, 53, 54, 55 և 56 հոդվածների։

45. Կոլեկտիվացված արտադրության մեջ աշխատող մասնակիցների ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվելու համար, աշխատանքի բոլոր տեսակի վարձատրման դեպքում (ամսական, գործարքային ակկորդային, և խառն), վերցնում է անաշխատունակությունը առաջացած ամսվա մեկին, նախորդ 2 լրիվ ամիսների փաստացի վաստակի գումարը։

Յեթե գանձարկղի մասնակիցն աշխատել է 2 ամսից պակաս, բայց վոչ պակաս քան 1 լրիվ ամիս մինչև անաշխատունակությունն առաջանալու ամսվա 1-ը, այդ դեպքում վերցվում է 1 լրիվ ամսվա վաստակը։

Յեթե գանձարկղի մասնակիցը մինչև անաշխատունակությունն առաջանալու ամսվա 1-ն աշխատել է մեկ

ամսից պակաս, այդ դեպքում իբրև հաշվելու հիմք վերացվում է նրա աշխատած ժամանակի վաստակը։

46. Սեփական ձիերով աշխատող մասնակիցների ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվելու համար, իբրև հիմք վերացվում է ընդհանուր վաստակի (մասնակցի և ձիու մասին) 35 տոկոսը։

47. Յեթե այն ժամանակաընթացքում, վորպիսինի վաստակը վերացված է նպաստը հաշվելու համար, աշխատանքի գործարքային, ամսական, ակկորդային կամ խառն վարձատրությամբ կոլեկտիվացված արտադրության մեջ աշխատող մասնակիցը փոխադրվել է այդ պաշտոնին, այդ դեպքում նպաստը հաշվելու համար իբրև հիմք վերցվում է նոր պաշտոնը։

Յեթե գանձարկղի մասնակիցը փոխարինել է ժամանակավորապես բացակայող մի այլ ավելի բարձր վաստակ ունեցող մասնակցի, այն ժամանակ իբրև հիմք նպաստը հաշվելու համար վերցվում է նրա վերջին դրությը։

Ժամանակավոր անաշխատունակության ընթացքում աշխատանքի վարձատրության տեղի ունեցած բարձրացումը կամ իջեցումը նկատի չի առնվում։

48. Վոչ կոլեկտիվացված արտադրության մեջ աշխատող մասնակիցների ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվելու համար (այդ թվում և վոչ կոոպերացված տնայնագործ մասնակիցների համար), իբրև հիմք վերացվում է մասնակցի փաստացի կամ թե գանձարկղի կողմից սահմանված պայմանական վաստակը, վորի հաշվով գանձարկղը գանձում է ապահովագրական մուծումները։

Յեթե գանձարկղի այս կարգի մասնակիցների ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվելու համար, իբրև հիմք վերցվում է փաստացի վաստակը, նրա միջին չափը վորոշվում է սույն կանոնների 45-րդ հոդվածում ցույց տրված կարգով։

49. Աշխատանքի ամսական, գործարքային, ակկորդային, խառն կամ այլ ձեվի վարձատրության դեպքում ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվելու համար, իբրև հիմք վերցվում են վաստակի բոլոր այն տեսակները, վորոնցից ստացվում են սոցիալական ապահովագրական մուծումներ։

50. Կոլեկտիվացված արտադրության մեջ աշխատող գանձարկղի մասնակիցների ժամանակավոր անաշխատունակության որական նպաստի չափը վորոշվում է 45-րդ հոդվածի կարգով, յերեվան բերված նպաստն որացույցային բանվորական որերի թվի վրա բաժանելու միջոցով, դուրս գալով այն շրջանի հեղափոխական տոն որերը, ժամանակավոր անաշխատունակության որերը (յեթե այդ ժամանակվա ընթացքում այդպիսիք յեղել են), հանգստի որերն արտելի կողմից չվարձատրվող դադարի որերը, վորպիսին վերացված է աշխատավարձը հաշվելու համար։

51. Այն դեպքում, յերբ արդկոոպերատիվ կազմակերպությունների կողմից սահմանվան է սահմանափակ ժամկետով և առանց աշխատավարձի պահպանման տարեկան արձակուրդներ, բանվորական որերը, վորոնք ընկնում են այդ արձակուրդների վրա նույնպես պետք է դուրս հանվեն այն որերի թվից, վորի վրա բաժանվում է վաստակը, որական նպաստի չափը վորոշելու համար։ Դադարի վոչ մի այլ որեր չեն հանվում այն որերի թվից, վորի վրա բաժանվում է վաստակը։

52. Նպաստը տրվում է այն բանվորական որերի համար, յեթե գանձարկղի մասնակիցը չի աշխատել ժամանակավոր անաշխատունակության հետևանքով։

53, Վոչ կոլեկտիվացված արտադրության մեջ աշխատող գանձարկղի մասնակիցների (նույն թվում վոչ կոոպերացվածների) որական նպաստի չափը վորոշվում է յերեվան հանված վաստակը 60, 30 կամ թե մինչև ան-

աշխատունակության ամսի 1-ը նախորդ մեկ ամսից պակաս որացույցային որերի թվի վրա բաժանելու միջոցով, համաձայն նրան թե սույն կանոնների 45 և 48 հոդվածների հիման վրա, վորքան ժամանակվա աշխատավարձն է վերցվում։

54. Արտադրական պրակտիկա ունեցող որական նպաստի չափը վորոշվում է պրակտիկայի ընթացքում ստացված աշխատավարձն աշխատած որերի թվի վրա բաժանելու միջոցով նույն այն կարգով, ինչ կարգով այդ կատարվում է համաձայն սույն կանոնների 50-րդ հոդվածի կոլեկտիվացված արտադրության մեջ մյուս զբաղված, աշխատանքների նկատմամբ։ Ուսանողի թոշակը հաշվի չի առնվում։

55. Արտելների և արդմիությունների կողմից վորակի բարձրացման, վերավորակավորման և կադրերի պատրաստման համար կազմակերպված կուրսերում սովորողների ժամանակավոր անաշխատունակության նպաստը վորոշվում է մինչև ամսի 1-ն ինչպես կուրսերի ադմինիստրացիայից, նույնպես և արտելի կամ արդմիության ադմինիստրացիայից, (վորոնց կողմից նրանք գործադրված են) ստացած մեկ ամսվա ընդհանուր գումարը 30-ի բաժանելու միջոցով։

56. 53-րդ և 55-րդ հոդվածներում ցույց տված գանձարկղի մասնակիցների ժամանակավոր անաշխատունակության նպաստը տրվում է անաշխատունակության բոլոր այն որերի համար, վորոնք յենթակա յեն վճարման (ինչպես բանվորական, նույնպես և վոչ բանվորական)։

57. Բացառապես տնայնագործական արհեստներով զբաղված գանձարկղի մասնակիցների արդկոլտնտեսականների որական նպաստը վորոշվում է սույն կանոնների 50-րդ և 53-րդ հոդվածների համաձայն, նայած նրան աշխատանքն ընթանում է կոլեկտիվացված արտադրության մեջ և թե տանը։

Նրանք, որոնք գրաղված են ոչ միայն տնայնագործական արհեստով, այլ և գյուղատնտեսության մեջ՝

ա) Եթե աշխատանքն ընթանում է պարբերաբար մեկ տնայնագործական արհեստում մեկ ել գյուղատնտեսության մեջ—նպաստը որոշելու համար իբրև հիմք ընդունվում է արհեստագործական վաստակը, կամ գյուղատնտեսության մեջ ստացած վաստակը, նայած նրան թե, որ շրջանի վրա յե ընկնում ժամանակավոր անաշխատունակությունը։

Եթե ժամանակավոր աշխատունակությունը զուգադիպել է և տնայնագործության և գյուղատնտեսության մեջ աշխատելու շրջաններին այդ դեպքում տնայնագործության մեջ աշխատելու նպաստը որոշվում է այդտեղ ստացած աշխատավարձով, իսկ գյուղատնտեսության մեջ աշխատելու նպաստը գյուղատնտեսության մեջ աշխորերի հաշվով ստացած վաստակով։

բ) Բացառապես գյուղատնտեսության մեջ գրաղված գանձարկղի մասնակիցներ—արդկոլտնտեսականների նըպաստը որոշվում է միայն աշխորերով։

գ) Տնայնագործական արհեստում և գյուղատնտեսության մեջ միաժամանակ աշխատելու դեպքում (որինակ, գյուղատնտեսական աշխատանքների յեռուն ժամանակ, յերբ որվա մեկ մասը տրամադրվում է տնայնագործության, իսկ մյուսը գյուղատնտեսության) նպաստների հաշվարկը կատարվում է վաստակի այն մասից, որն ընկընում է արհեստագործության վրա, նույն կարգով, ինչ կարգով կատարվում է բացառապես տնայնագործության արհեստով գրաղված գանձարկղի մասնակիցներ—արդկոլտնտեսականների նկատմամբ, իսկ վաստակի այն մասից, որն ընկնում է գյուղատնտեսության վրա—հաշվարկը կատարվում է աշխորերի հաշվով։

58. Գանձարկղի մասնակից կոոպերացված այն տըն-

նայնագործների նպաստը, որոնք միաժամանակ կոլտնտեսության անդամ են, որոշվում է դրամով կամ աշխորերի հաշվով, համաձայն սույն կանոնների 57-րդ, 59-րդ և 67-րդ հոդվածների։

Գյուղական վայրերում աշխատող և միաժամանակ կոլտնտեսության անդամ ոչ կոոպերացված տնայնագործները փոխադարձ ապահովագրության գծով չեն ապահովագրվում։

59. Մեկ աշխորվա արժեքը դրամի հաշվով որոշվում է ոպերացիոն տարվա վերջում, որից հետո կատարվում է հաշվարկ, հաշվելով տարվա ընթացքում, հիվանդության ժամանակ տված ավանները։

60. Հարկադիր աշխատանքների յենթարկած գանձարկղի այն մասնակիցների նպաստը, որոնք հարկադիր աշխատանքները կատարում են իրենց աշխատանքի տեղում, որոշվում է այն վաստակի հողից, որը դատարանի որոշմամբ պահպանված է աշխատանքի տեղում։

Ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու իրավունքից չեն ոգտվում այն մասնակիցները, որոնք հարկադիր աշխատանքները կատարում են ոչ իրենց աշխատանքի տեղում։

5. ՆՊԱՍՏԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՅԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

61. Ժամանակավոր անաշխատունակությունը վավերացվում է բացառապես փոխադարձ ապահովագրության գանձարկղի անաշխատունակության թերթիկով։ Ուրիշ ոչ մի վաստաթուղթ (բժշկի կամ բուժհիմնարկի կողմից տրված վկայական և այլն) փոխադարձ ապահովագրության գանձարկղի կողմից վճարման համար չի ընդունվում։

Անաշխատունակության թերթիկը կորցնելու դեպքում տրվում է դուբլիկատ այն բուժհիմնարկի կողմից, որը տվել է անաշխատունակության թերթիկը։

Եթե ժամանակավոր անաշխատունակությունը առաջացել է կարանտինի հետևանքով այն ժամանակ վոչ կոլեկտիվացված արտադրության մեջ (վոչ ընդհանուր արհեստանոցում) աշխատող դանձարկղի մասնակիցը բացի անաշխատունակության թերթիկից պետք է ներկայացնի արտելի վարչությունից տեղեկանք այն մասին, վոր նա կարանտինի ընթացքում արտելի կողմից հումությամբ չի մատակարարվել և արտադրանքն արտելին չի հանձնել։

Եթե ժամանակավոր անաշխատունակությունը առաջացել է ընտանիքի հիվանդ անդամին խնամելու հետևանքով, այն ժամանակ դանձարկղի մասնակիցը բացի անաշխատունակության թերթիկից պետք է ներկայացնի տնային վարչությունից, դյուղխորհրդից և այն տված տեղեկանքն ընտանիքի կազմի, ընտանիքի ամեն մի անդամի հասակի և զբաղմունքի մասին։

Եթե ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է աշխատավարձը պահպանված հերթական արձակուրդի ժամանակ դանձարկղի մասնակիցը բացի ժամանակավոր անաշխատունակության թերթիկից, վորի մեջ նշված պետք է լինի հիվանդին առաջարկած ռեժիմը (33-րդ հոդվածի «ա» կետը), պետք է ներկայացնի արտելի կողմից տրված տեղեկանք այն մասին, վոր նա համաձայն է տալ նոր հերթական արձակուրդ առանց աշխատավարձի պահպանման։

62. Անաշխատունակության թերթիկը տալիս է բուժհիմնարկի կողմից լիազորված բժիշկն անաշխատունակությունը վորոշելու որը։

53. Ժամանակավոր անաշխատունակության նպաստի հաշվարկը, իբրև կանոն կատարվում է արտելների (ձեռնարկությունների) կողմից, բայց այն դեպքում, յերբ արտելի ապարատն ի վիճակի չի այդ աշխատանքը կատարելու, այն դեպքում կատարվում է փոխադարձ ապահովագրության դանձարկղի կողմից։

64. Նպաստը տրվում է այն արտելի (ձեռնարկության) կողմից, ուր աշխատում են դանձարկղի մասնակիցները։

65. Նպաստի վճարումը արտելի (ձեռնարկության) կողմից կատարվում է աշխատավարձի վճարման հետ միաժամանակ, բացի հետևյալ դեպքերից, յերբ նպաստը տրվում է սկզբից՝

ա) ձրի սանատորիա-կուրորտային կամ մասնագիտական ստացիոնար (հիվանդանոցային) բժշկության համար տրված արձակուրդի դեպքում, ընտանիքավորներին հասանելիք նպաստը 2/3, իսկ ամուրիներին — 1/3։ Նպաստի մնացած մասը վճարվում է բժշկությունից վերադառնալուց հետո։

բ) այլ վայրում իր հաշվին բժշկվելու նմանապես և իր հաշվին սանատորիա-կուրորտային բժշկության համար ստացված արձակուրդի դեպքում, արձակուրդի ամբողջ ժամանակամիջոցի համար լրիվ։

գ) այլ վայրում մասնագիտական ամբուլատորային բժշկություն ստանալու համար տրված արձակուրդի դեպքում։

դ) հղիության պատճառով տրված մեկ ամիս ծննդաբերությունից առաջ արձակուրդի դեպքում։

Արտելի կազմի մեջ մտնող դանձարկղի մասնակիցները (վոչ կոոպերացված անձնագործները) նպաստ ստանալու համար կարող են դիմել փոխադարձ ապահովագրության դանձարկղը վոչ շուտ քան անաշխատունակության մինչև 15 որ անցնելը, կամ վոչ քան աշխատունակության վերականգնելը, յեթե անաշխատունակությունը տեվել է 15 որից պակաս։

66. Ժամանակավոր անաշխատունակության նպաստի վճարումը կատարվում է արտելից հասանելիք ապահովագրական մուծումների հաշվին։ Այն դեպքում, յերբ մեկ

ամսվա վճարված նպաստների գումարը գերազանցում է ապահովագրական մուծումները, գանձարկղը վերադարձնում է այդ վճարումները հերթական մուծումների ժամանակ, կամ թե համաձայնության գալով արտելի հետ գրանցվում է ապագա վճարումների հաշվին։

67. Տնայնագործությունից ստանալիք վաստակը կորցնողների ժամանակավոր անաշխատունակության նպաստի հաշվարկումը և վճարումը կատարվում է ընդհանուր հիմունքներով, համաձայն սույն կանոնների 63-րդ և 64-րդ հոդվածների։

Ինչ վերաբերում է աշխորերով հաշված նպաստին, աշխորերի արժեքը դրամի հաշվով վճարվում է ոպերացիոն տարին վերջանալուց հետո։

Այն դեպքում, յերբ արդկոլտնտեսությունում ոպերացիոն տարվա ընթացքում գործադրվում է աշխատած օրերի դիմաց ավանսեր տալու պրակտիկան, այդ ավանսները ընդհանուր հիմունքներով արդկոլտնտեսության կողմից տրվում են և այն արդկոլտնտեսականներին, վորոնք տարվա ընթացքում յեղել են անաշխատունակ և ոգտվել են անաշխատունակության թերթիկից։

68. Արտելը նույնպես և արդկոլտնտեսությունները պարտավոր են ներկայացնել փոխադարձ ապահովագրության գանձարկղի անաշխատունակության բոլոր թերթիկները, առանց բացառության նրանց վրա կատարած հաշվարկով ինչպես դրամի նույնպես և աշխորերի հաշվով, ամեն ամսվա 1-ին և 16-ին, անկախ նրանից վճարումները այդ թերթիկներով կատարված են թե վոչ։ Ուղարկվող թերթիկների վրա պետք է լինի շտամպ կամ թե «մարված» է (վճարված է) (մակագրություն)։

Գանձարկղի մասնակիցները իրենց հասանելիք նպաստը ստանում են ցուցակներով, աշխատավարձի հետ միաժամանակ, վորոնք մնում են արտելում։

69. Արտելները և արդկոլտնտեսությունները բոլոր հաշիվները և վճարումները կատարում են այդ աշխատանքները առանց վորևվե լրացուցիչ վարձատրման փոխադարձ ապահովագրության գանձարկղների կողմից։

6. ՉՍՏԱՑՎԱԾ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՄԱՆ ԿԱՐԳԸ

70. Անցած ժամանակվա նպաստը տրվում է ավել քան վեցը ամսվա այն դեպքում, յերբ դիմումը կատարվում է վոչ ուշ վեցը ամսից աշխատունակության վերականգնելու որից։ Հիշյալ ժամկետը անցնելուց հետո չպահանջված նպաստները գրանցվում են փոխադարձ ապահովագրության գանձարկղի ոգտին։

71. Գանձարկղի մասնակցի մահվան դեպքում չստացված նպաստը ստանալու իրավունքով ոգտվում են նրա ընտանիքի հետևյալ անդամները՝

ա) յերեխաները, վորդեգրվածները և մինչև 16 տարեկան յեղբայրները ու քույրերը։

բ) անաշխատունակության յերեխաները, վորդեգրվածները և այն յեղբայրները ու քույրերը, վորոնք մինչև 16 տարեկան հասնելը կորցրել են իրենց աշխատունակությունը։

գ) ծնողները, վորդեգրվողները և ամուսինները, անկախ նրանց անաշխատունակությունից այն դեպքում, յեթե նրանք գտնվելիս են յեղել մահացածի խնամքի տակ։

Հավելված № 2

ՎՈՐՈՇՈՒՄ

ԽՍՀՄ ԱՇԽԱԺՈՂԿՈՄԱՏԻ 1929 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 4-Ի ԸՆԴ. № ՑԵՎ 1931 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 2-Ի ԸՆԴ. № 4.

Արհեստակցական հիվանդացումների ցուցակ

	ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ	Հիվանդություն առաջացնող արհեստակցական վնասակարությունը	Այն արհեստները, վորոնցում գերազանցապես կամ բացառապես
1	Թունավորումներ	Արհեստակցական թույներ	Արհեստներ, վորոնցում մարդս ստիպված է գործ ունենալ տրվյալ թույնի հետ։
2	Աղիքային ճիճուներ (անկիլոստոմներ)	Ստորյերկրյա աշխատանք	Հանքափորներ, ածխափորներ ստորուղին (տունելի) բանվորներ քարհանքների բանվորներ։
3	Մաշկի (կաշվի քաղցկեղ)	Աշխատանք կապված սև ձյութի, խեժի, մրի պարաֆինի, քարածուխ (անտրացիտ) և նման նյութերի գործածության հետ	Ծխնելույզներ մաքրողներ, ածխագործներ, համապատասխան քիմիական արտադրության ճյուղերի բանվորներ
4	Մաշկի խրոնիկական բորբոքում	Գրգռիչ և ուտիչ նյութերի գործածության հետ կապված աշխատանք	Քիմիական գործարանների բանվորներ, վորոնք գործ են ունենում քրոմի ալյուրթթվուտների և նման ուրիշ նյութերի հետ։ Նյութերով մետաղի վրա նաշխողներ և ցինկի բուրաններում լոգանքների (վաննա, ավազան) սպասավորուհիներ։
5	Մաշկի, այլ և քթի և բերանի լորձաթաղանթի և աչքի յեղջրաթաղանթի խոցեր	Նույնը	Նույնը
6	Փոշու հիվանդություններ (պնիվմոկոնիոմոզներ)	Մեծաքանակ փոշու յերկարատև ներշնչումներ	Ածխափոր, հանքափոր բանվորներ, վորոնք աշխատում են խճաթվոտ.
7	Կիսոնի հիվանդություններ (ջրասուզային հիվանդ)	Մթնոլորդային բարձր ճնշում	Կեսուն շինիկներ (ջրերի մեջ հիմք փորողներ, ջրասուզներ։
8	Նիստագմա (ակնախնձորի դեղդողց)	Ստորյերկրյա աշխատանք	Հանքափոր, ածխափոր բանվորներ
9	Հյուսվածքների ծանր ջնասվածքներ, (մաշկի բորբոքումներ, խոցեր բաղցկեղ, ատրոֆիա)	Ռենդգենյան ճառագայթներ և ռադիոճառագայթներ	Ռենդգենյան կաբինետի անձնակազմ, ռենդգենյան խողովակներ շինող բանվորներ, ռադիումի հետ շփում ունեցող անձինք։
10	Աչքի վոսպնյակի աղտորում (կատարակտ)	Ճառագայթավոր ներգիայի սիստեմատիկ և ինտենսիվ ներգործում	Ապակի փչողներ, ապակի կպցնողներ (զոտողներ) մետաղագործական և թրծող (այրող) հնոցների բանվորներ։
11	Աչքի ցանցաթաղանթի բորբոքում	Նույնը	Նույնը
12	Ներքին ականջի ջնասվածքի հետևանքով առաջացած լսողության թուլություն	Ստոր ձայների սիստեմատիկ ներգործումը	Զուլհակներ, կաթսայագործներ, դարբիններ, դումագործներ։
13	Ծնկան, արմունկի նախաբազկային հոդերի լորտապատկերի քրոնիկական բորբոքում	Համապատասխան հոդերի բնագավառում սիստոմատիկ ճնշում կամ շփում	Քարագործներ, կտուրծածկողներ, պարկետագործներ, սալհատակողներ, ձեռքով սայլակներ և սահնակներ քշողներ (լեռնագործներ)։
14			

15	Մկանների յերկարատև կծկում (գյուպյուտրինյան կծկում)	Զեռքնափի ջղաթաղանթի սիստեմատիկ հաշմություն	Վագոնեսի ուղեկիցներ, փականագործներ փոստային թղթակցություններ վրա կնիք խփողներ
16	Զլային բունոցների քրոնիկական բորբոքում	Համապատասխան մկանների ծանր աշխատանք.	Լվացարարուհիներ, հարթուկներ, տուփեր և փաթեթներ պատրաստողներ, եռիկետներ փակցնող (դրոշմողներ)։
17	Արհեստակցական համակարգային նեվրոզներ	Համապատասխան մկանային խմբերի գերլարում	Հեռագրիչներ, սղագործներ, մեքենագրուհիներ. դաշնահարներ, ջութակահարներ, տոկարներ (չարխաքաշներ), գրասենյակային աշխատողներ, գծագրողներ։
18	Ծայրանդամների ներգացավություն և նյարդերի բորբոքումներ (նեվրալգիա և ներվիա)	Համապատասխան ծայր անդամների (ձեռքերի, վոտքերի) գերլարվածություն կամ նյարդային բջիջների ճնշում	Դարբիններ, լվացարուհիներ, բեռնակիրները (բեռնողներ և բեռնաթափողներ)։
19	Վոտքերի արյունաբալտ յերակների (վենաների) լայնացում ցնիթով կամ խոցերով	Ցերկարատև կանգնել, կամ յերկարատև մանգալը	Գրաշարներ, բեռնակիրներ, դազգաների բանվորներ, նամակատարներ, սպասավորներ, մատուցողներ (ոֆիցիանտ), ատաղնաբուժներ, վորոնց աշխատանքը պահանջում է անընդհատ կանգնել և վաճառողները (խանութային գործակատար)։
20	Ծայրանդամների հոդերի փոփոխումներ (տափակ թաթ, հացթուխների վոտքեր և այլն)	Հոդերի բարձր բեռնավորում	Նույնը

21	Ձայնալարերի թեթև կաթվածք, կոկորդի խրոնիկական բորբոքում, «յերգիչների հանգուցյալների» հետևանքով ձայնի կորուստ	Ձայնալարերի սիստեմատիկ լարում	Ցերգիչներ, ուսուցիչներ։
22	Պրոգրեսիվ (զարգացող) կարճատեսություն	Տեսողություն յերկարատև լարում մոտիկից աշխատելու ժամանակ	Կարողներ, ժամագործներ, փայտագործներ, սրբագրիչներ։
23	Սիբիրի ախտ	Շփում կենդանիների այլ և կենդանական մթերքների, խոզաժազերի, բրդի, մորթու, կաշիների հետ և այլն	Սպանդանոցի աշխատավորները, հովիվները, կաշվեգործները, խոզագործները, թաղիքագործները։
24	Սլախտ (սապ)	Մշտական շփում ձիերի հետ, նրանց խնամելու առնչությամբ	Ձիապաններ, ձիավորներ և կառապաններ։
25	Կաստալություն	Մշտական շփում շների և կատուների հետ	Ոգտագործող (ուտիլիզացիա) գործարանների աշխատողները, շուն վորսողները։
26	Կտալբնյակ	Անմիջապես հողի հետ շփում ունենալու անհրաժեշտության հետ կապված աշխատանք	Հողանտառի աշխատավորներ, հողափոր բանվորներ։
27	Սուր ինֆեկցիոն հիվանդություններ, վորոնք առաջանում են նման հիվանդությունների սպասարկելուց յեթե հիմք չկա յեն թադրելու, վոր հիվանդացումի պատճառը տվյալ արտ-	Միաժամանակ շփում ինֆեկցիոն վարակ առաջացնող դրդիչների կամ վարակված նյութերի հետ	Մարդկանց և կենդանիների համաճարակային հիվանդությունների ժամանակ վարակիչ հիմնարկներում և բաժանմունքներում աշխատող կամ ըստ աշխատանքի բնույթի վարակիչ հիվանդությունների հետ շփում

հետի աշխատանքների հետ կապ չունի և նրանց պատճառները ինքնուրույն են	ունեցող բժշկական և անասնաբուժական անձնակազմ, շարունակ վարակված նյութերի հետ շփում ունեցող գիտականհետազոտուտներների և լաբորատորիաների անձնակազմը։

Ծանոթություն 1. Ինստիլեկտը (բավականություն) կազմալուծող և բանվորությունը փոփոխող ծանր հիվանդից կամ վաղաժամ արտերիոս-սկլերոտիկ թմրության և կամ տվյալ հասակի չհամապատասխանող կլիմակտերիկ արտահայտված հոգեկան հիվանդության հետևանքով անաշխատունակությունը կորցրած հոգեբուժական հիվանդանոցներում հոգեկան հիվանդների անմիջականորեն սպասարկող բժշկական անձնակազմը յենթակա յե ապահովման այս ցուցակում թված արհեստակցական հիվանդություններից աշխատունակությունը կորցրած անձանց հետ հավասար հիմունքներով։ Նմանապես նշված հիվանդացումներից մահացած այդ բուժ աշխատավորների ընտանիքների անդամները ապահովվում են այս ցուցակում թված արհեստակցական հիվանդացումներից մահացածների ընտանիքների անդամների հետ հավասար հիմունքներով։

Ծանոթություն 2. Տեղվորոշումը բնորոշ և արհեստակցական պարտականությունների կատարմանը որինակ՝ սիֆիլիսը մանկաբարձ բժիշկների ձեռքերի վրա, ծծմայրերի ստինքների վրա, ապակի փչումներ—բերանի բնագավառում։

7. ՆՊԱՍՏԻՑ ԶՐԿԵԼԸ

72. Այն դեպքում, յերբ գանձարկղի մասնակցի ժամանակավոր անաշխատունակությունը առաջանում է սուր կերպով հարբած լինելու հետևանքով, կամ թե մասնակցի այնպիսի գողծողության հետևանքով, վորը կատարվել է սուր կերպով հարբած դրության (կռիվ և այլն) նպաստը չի տրվում անաշխատունակության առաջին ո-

բացությունի հինգ որերի համար, վորոնք նորմալ պայմաններում պետք է վարձատրվեն։ Յեթե գանձարկղի մասնակցի խնամակալության տակ վոչ վոք չկա, գանձարկղը կարող է նրան զրկել նպաստից և ավելի յերկար ժամանակով, բայց վոչ ավել քան մեկ ամիս։

73. Գանձարկղի մասնակիցը կարող է ամենեվին զրկվել նպաստից հետեվյալ դեպքում ա) յերբ նպաստ ստանալու նպատակով իր առողջությանը դիտավորյալ կերպով հասցնում է վնաս։

բ) յերբ բժշկվելու համար տրված արձակուրդն ոգտագործվում է վոչ իր նպատակի համար։

գ) յերբ արհեստական կերպով վատացնում է իր հիվանդությունը։

դ) յերբ բուժական հսկիչի հրավիրելով չի ներկայանում վերաքննության առանց հարգելի պատճառների։

74. Գանձարկղի մասնակցի կողմից իրեն առողջությանը դիտավորյալ կերպով վնաս հասցնելու կամ թե ակնհայտ սխալ փաստաթղթեր ներկայացնելու հետևանքով նպաստի ձևով վճարած ավել գումարները դատարանի վորոշմամբ գանձարկղի կողմից հետ է պահվում հետագա վճարումներից ամեն առանձին դեպքում, գանձարկղի վարչության կողմից վորոշված հավասար չափերով։

75. Հաշվարկներից սխալ կատարելու հետևանքով նպաստի ձևով վճարված ավել գումարները կարող են հետ պահվել հետագա վճարումներից առանց դատարանի վորոշումի։

76. Նպաստ ստանալու նպատակով զեղծարարություն կատարելու դեպքում (կեղծիք, ջնջում և այլն) գանձարկղի մասնակիցը յենթարկվում է քրեական պատասխանատվության և նպաստի վճարումն դադարեցվում է մինչև դատարանի վորոշումը։

77. Գանձարկղը տնայնագործ վոչ կոոպերացված անդամներին ժամանակավոր անաշխատունակության նպաստ

տալիս է այն դեպքում, յեթե նրանց սահմանված ժամկետներում վճարում են իրենից հասանելիք ապահովագրական մուծումները։

8. ՆՊԱՍՏԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՅԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳ

78. Գանձարկղի մասնակիցների բողոքը կապված արտելների կողմից տրվող նպաստների հետ, վերջնականապես լուծում է այդ արտելներին սպասարկող փոխադարձ ապահովագրության գանձարկղը։ Փոխադարձ ապահովագրության գանձարկղի վորոշումն արտելների ձեռնարկների կողմից վճարված նպաստների դեմ բողոքելու մասին վերջնական են և կարող են բողոքարկվել փոխադարձ ապահովագրության վերադաս մարմինների առաջ յերեք ամսվա ընթացքում միայն հսկողության կարգով։

ՀԱՎԵԼՎԱԾ № 2.

Սեզոնային աշխատանքի ցուցակ.

1. Տորֆի շահագործում.
2. Անտառամթերում և փոխադրություն (ջրերով).
3. Տերպենտիկի արտադրություն.
4. Կեղեվաթելի և կեղեվի արտադրություն.
5. Ջրային տրանսպորտ (փոխադրություն).
6. Ձկնավորություն.
7. Բոլոր շինանյութեր.
8. Հանքարդյունաբերություն (շահագործում և մշակում).
9. Բոլոր փայտագործական (ատաղձագործական) աշխատանքները գյուղում).
10. Ատառաքիմիական աշխատանքներ.
11. Մորթի—մուշտակային արտադրությունը գյուղում
12. Ձեռքով գործելու բոլոր տեսակները.
13. Գորգագործություն.

14. Թաղիքի արտադրություն.
15. Ճանցագործություն։
16. Կրուժեվաներ—կար և այլ ձեռագործներ գյուղում.
17. Խաղալիքների արտադրությունը գյուղում.

Սեզոնի սկիզբը և վերջը սահմանում է արհեստագործական միության գանձարկղը միության հետ միասին։

ՀԱՎԵԼՎԱԾՔ № 3

Վորոշում ԽՍՀՄ Աշժողկոմատի 1931 թ. ոգոստոսի № 356 ֆիզիկական աշխատանքը պահանջող արհեստների հավասար մինչև ծննդաբերության և 56 որ տեվողությամբ ծննդաբերությունից հետո արձակուրդ տվող արհեստների ցուցակ։

1. Ըստ վարչական խմբի

1. Քրեական հետևողության գործակալներ.
2. Միլիցիոներներ.
3. Կալանտների հսկիչներ.

2. Ըստ գրասենյակային խմբի

4. Մեքենագրուհիներ.
5. Սղագրուհիներ մշտական աշխատանքում ձեռնարկություններում և հիմնարկություններում.
6. Կոմատրոմետրիսկի.
7. Ապակագրուհիներ (ստեկլոգրաֆիստկի).

3. Ըստ ճարտարապետական յեվ յերկրաբանական խմբի

8. Ճարտարապետական և յերկրաբանական մասնագիտություն ունեցող անձինք (ճարտարապետներ) տեխնիկներ, յերկրաբաններ, (ազրոնոմներ), միլիատորներ, հողաչափներ, հողաշինարարներ, գորոտեխնիկներ, տակսատորներ, յերկրաչափներ, գծագրիստներ, բացի վարչա-կառավարական ապպարատում աշխատողներից։

4. Ըստ առեվտրական խմբի

9. Վաճառողներ, կապողներ, առևտրական հիմնարկներում և պահեստներում.

10. Ավտոմատ դրամարկղի վրա աշխատող գանձապահներ։

11. Առեվտրական մանրածախս ցանցի աշխատավորուհիները.

ա) ձեռքի վրա սայլակներով կամ արկղներով մանրածախս առևտուր անող աշխատավորուհիներ.

բ) մամուլ տարածող և հայտարարությունների պատվերներ ընդունող գործակալներ, գյուղատնտեսական հումույթ մթերք, տականքներ և այլն հավաքողներ։

5. Ըստ տրանսպորտի յեվ կապի խմբերի

12. Կայարանապետների ոգնականներ.

13. Սիլիկատը (ընտրովի) կապի գիսպետչերի և ապերատորներ.

14. Շահագործման բաժանմունքների գիսպետչերներ.

15. Հեռագրողուհիներ.

16. Հեռագրի կայարանային տեխնիկներ.

17. Քաղաքային, մերձ քաղաքային և միջ քաղաքային հեռախոսային կայարանների հեռախոսուհիներ, կոմուտատորների վրա լրացուցիչ վոչ պակաս 100 տոկոսով աշխատող հիմնարկությունների, ձեռնարկությունների հեռախոսուհիների.

18. Մանտյորներ.

19. Փոստ-հեռագրական թղթակցությունների տեսակավորողներ.

20. Կնքողներ (շտեմպել խփողներ).

21. Ծանրոցներ (պասիլկաներ) ընդունող և դուրս տվող անմիջականորեն ծանրությունները տեղափոխելով զբաղված գանձապահները.

22. Ծանրոցային գրասենյակների աշխատավորուհիներ զբաղված ծանրություններ տեղափոխելով.

23. Պարբերական հրատարակչությունների կոմպլեկտներ կազմողներ.

24. Լրագրային բաժանմունքների եքսպեդիտորներ.

25. Փոստ քաղաքային բաժանմունքների հանձնող և նրանցից ստացող աշխատավորուհիներ.

6. Ըստ Բժշկական խմբի

26. Առանձնապես վտանգավոր հատաճարակների դեմ պայքարող (չումա, խոլերա, ծաղիկ, բծավոր տիֆ), և անմիջականորեն հիվանդների հետ շփումն ունեցող բժշկուհիները ու բուժակուհիները.

27. Ինֆեկցիոն հիվանդանոցների ու բաժանմունքների բժշկուհիներ և բուժակուհիներ.

28. Վերահասության հիվանդանոցների և բաժանմունքների բժիշկներ և բուժակուհիներ.

29. Հոգեկան հիվանդանոցների և բաժանմունքների բժիշկներ, բուժակուհիներ և հսկիչներ.

30. Ծննդաբերական հիմնարկների բժիշկներ և բժշկուհիներ.

31. Ռենտգենյան կաբինետներում ռենտգենյան աշխատանքներ տանող բժիշկներ, բժշկուհիներ, լաբարանտուհիներ.

32. Կալանավորների բժշկական հիմնարկների բժիշկներ.

33. Առատավոր յերեխաներ (դիֆեկտիվ) հոգեկան ներվազատալոգիական բուժհիմնարկների բժիշկ մանկավարժներ.

34. Պատալոգ անատոմ բժիշկներ (յեթե մշտապես են աշխատում պատալոգիական անատոմիական հիմնարկներում).

35. Շրջանային հոգեկան բժիշկներ.

36. Սանիտարական բժիշկներ և նրանց ոգնականներ, բացի հիմնարկությունների վարչա-կառավարչական ապարատներում աշխատողներից.

37. Տներում ոգնություն հասցնող բժիշկներ.

38. Ֆիզկուլտուրային բժիշկ տեսուչներ.

39. Ատամնաբույժներ.

40. Ատամնատեխնիկներ.
41. Անասնաբույժներ և բուժակուհիներ
42. Մանկաբարձուհիներ.
43. Մասսաժիստկաներ.
44. Բժշկական քույրեր.
45. Մսուրներ—քույրեր դաստիարակչուհիներ.
46. Հետևյալ արհեստի դեղագործներ՝ ասիստենտկաներ, (ընթերականներ) դեֆեկտորներ, լաբարանտկաներ կուլարանտներ և ֆասովշչիցաներ.
47, Ախտահանողներ

7. Ըստ լուսավորության յեվ մամուլի աշխատավորների խմբի

48. Մանկական տների, պարտեզների և դաղութների ժոտավորապես հետ մնացածների և ֆիզիկապես արատավորների հիմնարկների և իրավակարգը խախտող անչափահասների աշխատանքային տների (ռեֆորմատորյաներ) ղեկավարներ.
49. Գյուղական վայրերի, դպրոցի ուսուցչուհիները.
50. Առաջին և յերկրորդ աստիճանի փակ դպրոցների (ինտերնատների) դաստիարակչուհիները.
51. Ֆիզիկական կրթության հրահանգիչները։
52. Եկսկուրսիաների ղեկավարուհիներ.
53. Կալանատներում լուսկրթական աշխատանք տարող անձինք.
54. Խրոնիկյոր-ռեպորտյորներ ինտերվյուհիներ, ֆոտո-խրոնիկյորներ և ֆոտո-ռեպորտյորներ.
55. Վոտքի վրա գրավաճառներ։

8. Ըստ գեղարվեստի աշխատավորների խմբի

56. Դրամայի, ոպերայի. ոպերետկայի, բալետի, մուզիկ-խոլայի, մինյատուր թատրոնի, եստրադային (բեմի) և կրկեսի արտիստկաներ (դերասանուհիներ) այլ և կոնցերտկանական ներ (յերգչուհիներ), յեթե նրանք անմիջապես բեմ են դուրս գալիս։

57. Բալետմեստերշաներ.
58. Պնձի փողային և հարվածային գործիքներով նվագող որկեստրանտկաներ.
59. Կինո նկարչությունում զբաղվածներ.
ա) Ադմինիստրատորներ (ռեվիզորի ոգնականներ).
բ) դերասանուհիներ.
գ) կինո-ոպերատորներ և նրանց ոգնականներ.
դ) լուսանկարիչներ։
60. Զվարճության ձեռնարկություններում և կինոֆաբրիկաներում անմիջականորեն դեկորացիաներ նկարելով զբաղված դեկորատորները և գեղարվեստագետ դեկորատորներ։
61. Զվարճության ձեռնարկություններում և կինոֆաբրիկաներում բեկվիզիտորներ և բուտաֆորներ։
62. Զվարճության ձեռնարկություններում հաճախող հասարակության զգեստապահներ (հանդերձարաններ), դերասանների հագցնողներ և զգեստները բեմական հանդերձարան (գարդերոբ) և կահավորանքը տեղափոխողները։
63. Պատկերացնող արհեստների նատուրշչիցաներ։

9. Ըստ զանազան խմբերի

64. Կանգնած աշխատող լաբորանտկա-քիմիկներ։
65. Գրադարանային գործի աշխատավորուհիներ, վորոնք գրքերը տեղափոխում են ձեռքով կամ բարձրանում սանդուխներով, տախտակամածներով և այլ նման սարքավորումներով։
66. Դիվանագետներ (արխիվարիուսներ)։
67. Բոլոր կանայք, վորոնց աշխատանքը կապված ե շրջագայության հետ (որինակ շրջանային բժիշկների և բուժակուհիների), շարժողական խմբակների (ոտրյադ) բժիշկներ ու բուժակուհիներ, շրջագայող գործակալուհիներ, հրահանգչուհիներ և այլն։

Ծանոթություն. Այս ցուցակում թված արհեստներով զբաղ-

ված վարձու կանայք, վորոնք աշխատում են վոչ լրիվ բանվորական որ, 56 որ ծննդաբերությունից առաջ և 56 որ ել հետո արձակուրդ ստանալու իրավունքը վայելում են այն դեպքում, յեթե աշխատանքը տեվում է տվյալ արհեստի համար սահմանված բանվորական որվա կեսից ավելի ժամանակ։

ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԱՐՏԵԼՆԵՐԻ ՅԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՐԿՂԻ ՄԻՋԵՎ ՄՇՏԱԿԱՆ ԿԱՊ

Հայտնում ենք, վոր անդրկոոպերացիայի կազմակերպություններն իրենց այսորվա աշխատանքի ծրագրի մեջ կարող են մտցնել արդյունաբերական ձեռնարկների զեկուցումներ լսելու հարցը և պետք է աջակցեն նրանց վրա դրված խնդիրների իրագործմանը, չխառնվելով նրանց ոպերատիվ գործունեության մեջ։

Արդկոոպերացիայի փոխադարձ ապահովագրության գանձարկղների ունեցած պարտքերի նկատմամբ Համարդկոոպխորհուրդը ստիպված եր արձանագրել, վոր այդ հարցը չնայած Համկոոպխորհուրդի քանիցս խստիվ կերպով արված ցուցմունքների այդ պարտքերի շտապ մարման անհրաժեշտության մասին ժամանակին չի ստացել յուր անհրաժեշտ լուծումը։ Համկոոպխորհուրդը, պետբանկի կողմից ընթացիկ տարվա 2-րդ կվարտալի նոր լիմիտները հայտարարելու հետ միասին հունիսի 4-ին հեռագրել է «պահանջում ենք դանձարկղներից լրիվ կերպով փակել հետևյալ պարտքերը աշխատավարձի, կապիտալ շինարարության ֆոնդի, հանձնաժողովի կուլտակադրայի, «կենտրոնի» և այլն։ Պետբանկի և Համկոոպխորհուրդի սույն թվի հունիսի 1-ի միասին ստորագրած դիրեկտիվ հեռագրում հասցեագրված պետբանկի տեղական բոլոր հիմնարկություններին և արդկոոպերացիայի կազմակերպություններին կատեգորիկ կերպով առաջարկված է, պահանջեցեք, վորպեսզի արդյունաբերությունները իրենց հունիսի 1-ից բացված

լիմիտի սահմաններում լրիվ կերպով մարեն տնայնագործների աշխատավարձի, արդդանձարկղների և այլ բոլոր պարտքերը։ Համկոոպխորհուրդը հրավիրում է Անդրկոոպերացիայի կազմակերպությունների ուշադրությունը Անդրկոոպերացիայի փոխադարձ ապահովագրության դանձարկղների ունեցած անչափ ձգձգած պարտքերի շտապ լուծարքի յենթարկելու անհրաժեշտության վրա։ Հիշյալ լուծարքը պետք ի իրագործվի ամենակարճ ժամանակաընթացքում։ Անդրխորհուրդները, հանրապետական կենտրոնները, ինքնավարժ հանրապետությունների յերկրային և մարզային միությունները փոխադարձ ապահովագրության դանձարկղների հետ միասին յերկու կողմերի ստորագրությամբ պետք է հեռագրեն սույն առաջարկության կատարման մասին։ Համկոոպխորհուրդը հրավիրում է Արդկոոպերացիայի կազմակերպությունների ուշադրությունն այն բանի վրա, վորի պարտքերի մարման հետագա ձգձգումը վոչ մի կերպ տանելի համարել չի կարող, և նրա կողմից ձեռք կառնվեն ներագործության ամենակտրուկ միջոցները մինչև անդամ իսկ վարկի փակումը պետբանկում։

ՀԱՄԿՈՈՊԽՈՐՀՈՒՐԴ **ԲՈԼՈՏՈՎ**

ՀԱՄԱՐԴԴԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ **ԼԻՈԿՈՄՈՎԻՉ**

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀԱՄԱՐԴԿՈՈՊԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՐԿՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԻՍՏԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՐԿՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԻ ՀԵՏ ՈՒՆԵՆԱԼԻՔ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

13 հուլիսի 1931 թ.

Արդյունաբերական կոոպերացիայի փոխադարձ ապահովագրության գանձարկղների սիստեմը, որը կանչված է բացառապես սպասարկելու Անդրկոոպերացիայի կազմակերպությունների անմայնագործ մասնակիցների սոցիալական միջոցներով, սերտ կերպով կապված այդ կոոպերացիայի հմմական կազմակերպությունների հետ, որոնց վրա նա հենվում է։

Փոխադարձ ապահովագրության գանձարկղները, հանդիսանալով արդյունաբերական կոոպերացիայի սիստեմի անբաժան մասն իրենց աշխատանքը տանում են ինքնուրույն կերպով, իբրև սոցիալական ապահովագրության սիստեմ։

Փոխադարձ ապահովագրության գանձարկղների աշխատանքն Անդրկոոպերացիայի կազմակերպություններին մոտեցնելու և նրանց հետ գործում կապ ունենալու նպատակով համկոոպխորհուրդն նախ. ՀԱԿԽ և փոխադարձ ապահովության գանձարկղների համամիութենական բյուրոն որոշում են՝

1. Անդրկոոպերացիայի փոխադարձ ապահովագրության գանձարկղների միջոցների պլանավորումը կատարվում է փոխադարձ ապահովագրության Համամիութենական բյուրոյի կողմից։

Գանձարկղների բյուրոյի կողմից կազմված ֆինպլանները ֆինանսական քաղաքականության սեկտորի կողմից մտցվում են սիստեմի միասնական արդֆինպլանի մեջ։ Գանձարկղների բյուրոյի կողմից կազմված ֆինպլանը կարող է փոփոխվել, յեթե այդ փոփոխումները կապված են Անդրկոոպերացիայի արտադրական պլանի փոփոխումների հետ, այդ փոփոխումները կատարվում են անմիջականորեն փոխադարձ ապահովագրության գանձարկղների բյուրոյի կողմից։

2. Փոխադարձ ապահովագրության գանձարկղների ազատ գումարներն ոգտագործվում են Անդրկոոպերացիայի սիստեմի կողմից ապակենտրոնացված կարգով վարկային մնացորդների գումարների չափով, որոշված փոխադարձ ապահովագրության գանձարկղների բյուրոյի կողմից հանրապետական մարզային և յերկրային միությունների համար, պետբանկի կողմից այդ գումարների հանդեպ լրացուցիչ լիմիտ բաց անելու միջոցով։

3. Ֆինանսական պլանի այս կամ ցուցանիշները որոշման ժամանակ տարաձայնությունն առաջանալու դեպքում, տարաձայնությունները լուծվում են փոխադարձ ապահովագրության գանձարկղների բյուրոյի նախագահի և ֆինանսական քաղաքականության սեկտորի վարող Համկոոպխորհրդի նախագահության անդամի կողմից։

4. Փոխադարձ ապահովագրության գանձարկղների բյուրոն և ֆինանսական քաղաքականության սեկտորը պետք է տան սպառեցուցիչ ցուցմունքներ Անդրկոոպերացիայի կազմակերպությունների և փոխադարձ ապահովագրության գանձարկղների փոխհարաբերությունների մասին։

ՀԱՅԿՈՍԿՈՄ ՏՊԱՐԱՆ
ՀԱՅ ԽՍՀ ԳՈՍԿՈՄՏՊՐԵՍ
ՀԱՍՏԱՏՎԱԾ է
Ա. ՄԻԿՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0227255

43.748

O 304.
1922/23